

ՔԱԺԱ	ՉՅԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուշկար	յ ամսու
Տարե	6 12 ֆր.
Վեցս	եայ 6 »
Արտասան	անի հա-
մար	Տարեկան 15 »
Վեցսանեայ	8 »
Անտիկալի	համար
Տարեկան	3 ֆր.
Վեցսանեայ	1.50 »
ՎԱՆԻՍԻՆ ՎՃԱՐՆԵԼԻ	

Իրականացան տղր առաջին կրթական համար 40 սանթիմ. հ. իսկ վերջին կրթական համար 20 սանթիմ. հ. Երեկոց առաջին անգամ համար 20 ՍԱ գեղջ կրթայ:


Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻ ԶՈՐԻՔՆԵՐԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԾՐԱԲԸ

Նախկին և նոր զրկեր
Կրթությունների հասցեի
—
Редакция на «Вестникъ»
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)
—
Կրթության և շին տրուի
Արտասանական ձեռքի
X 20 ՍԱՆԹԻՄ X
Պուշկարիոյ համար ձեռքի
X 15 ՍԱՆԹԻՄ X

ՇՈՐՈՒՄԻ ՆՈՐ ԲԱԺՍԵՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԵՐԻ ՎՃԱՐԻ



Ս Ա Հ Ա Գ Ո Յ Ժ

Անցեալ յուրիս Ծին, հինգ քաջ
Հայերէ և հինգ քաջ Պուշկար-
ներէ բազմապատ խումբ մը, նը-
պատակ ունենալով ազատել Ա-
քրիաի քաղաքական տքորական-
ները եւ Ագրիանուպոլսոյ բան-
տարկեալները, մահը աչք ա.
աած՝ կանցնին թրքական հողը
Բայց Ագրիանուպոլսոյ զօրանոց-
ներուն քով կը շրջապատուին
երկու թուրք զօրագնաերէ և
հեծելագնաէ մը: Այդ քաջերէն
երկուքը, ԹԱԻՌՈՒՂ ԶԱՄԱՆԵՍԻ
և ԿԷՕՐԿԻ ՅՕԹԷՅԻ գեռ զաշտին
մէջ ձիերէ կը կոխկառուին: Ըն-
ցած ու թը քաջերը առաւօտեան
ժամը 9 ու կէսէն մինչեւ ցերեկ-
ուան 2 1/2 հերոսաբար կը կու-
ին, հակառակ իրենց շատ ան-
նպատակ գիրքին, բաղձաթիւ
թուրք զինուորներ սպաննելով:
Այդ անհաւատար կուին մէջ չորսը
արդէն կիւնան, իսկ կենդանի
մնացած չորս կարիճները՝ ՊԵՏ
ՐՈՍ ՍԷՐԵՄՃԵԱՆ, ՕՆԵՒԻ ԹՈՐՈՍԵԱՆ
ՍՎԷՏՈՍԼԱՎ, ՍԷՐՃԱՆՈՎ և ԽՐԻՍՏՕ
ԻԼԻՔԻՎ, գնդակի սպառուսէն հար-
կադրուած, վեց հարուածեան.
ները ձեռքերին, կը յարձակին
թուրք զօրքերու վրայ սպան-
նուելու նպատակով: Բայց քանի
մը տեղերէ վերաորուած, ողջ
կը բանուին ու բանա կը տարուին:
Հոն անուր շարքարանքներու
կենթարկուին և նոյեմբեր 27ին
կախազան կը հանուին Ագրիա-
նուպոլսոյ չորս հրապարակներու
վրայ:

Ուստի, կոմիտէս այդ քաջերու
անհաճ յիշատակը յարգելու հա-
մար, հայ հասարակութիւնը կը
հրաւիրէ փոքր, կերակր, հայոց
եկեղեցին հոգեհաճ դատեան պա-
տանին:

Վառնայի Հայ. Յայ Գրչի Վեցսրե: Ա
ԿՈՒՄԻՏԷ
1901 Յ նոյեմբ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Մուշ 5 Սեպտեմբեր

Այդ տարտամ ու անել գրու-
թեան մէջ մասնուած կառավա-
րութիւնը, ամէն տեսակ զոհողու-
թիւններ յանձն առած էր ընելու
եթէ հայերէս մէկը յանձն առ-
նէր. երթալ կառավարութեան
պարզելու այն ամէն յեղ. անցու-
դարձերն որ մինչեւ այս օրո կա-
տարուեցան, ու գեռ ևս կ շա-
րունակուի. բայց անկարելի ե-
ղա օրերով ու ուժիւններով այդ
հարցով զբաղող տեղույս կառա-
վարս թե ան բան մը իմանալ:

Կառավարութիւնը այդ անել
գրութեանն ու զալիք պատաս-
խանառութեանն շիւարած, ինչ
ընելիքն չէր գիտեր. մէկէն եր-
բեմն Հայրենիքի սիրուն կուռոյ
ու սլոմ ալ 30 սրձաթի համար
ու զայի պաշտոն տանձնող այդ
գարչելի երիտասարդն խումբէն
բաժնուելով շիտակ կառավարու-
թեան կերթալ, այնտեղ ամէն
խան պարզելէ յետոյ Մեկուրք
գրի մէջ սպաննող Շարիֆի
մարմնոյ որտեղ պահուիլն ևս կը
յայտնէ. Այսպիսի անակնկալ
յայտնութեան մը վրայ, պահ մը
կառավարութեան անհաւատալի
թուեցաւ, բայց իրականութիւնը
ստուգելու համար կառավարու-
կան պաշտօնեաներ ու տաճիկ
խումբան այդ գարչելի զաւա-
ճանով մէկտեղ, Շարիֆի մար-
մին գտնելու համար կերթան.
պահուած տեղույս վրայ հասնե-
լով, յոյց կուտայ այն փոքր՝ որ
այդ շան մարմինը պահուած

է. խուժանը՝ բանալով մարմին
գուրս կը բերէ:

Այդ գարչելի ըստածներուն
առաջին անգամ փորձով հաւա-
տատարին տես ելով կառավարու-
թիւնը կը սկսէ շոյել զաւաճա-
նին. այս անդ մ ալ ամէն մա-
մատով հայ ուկային խումբի ուր
պատուարուիլն իմանալու հա-
մար քանի որ այդ ցածին նպա-
տակն էր հայրուկային խումբն
բերան առլ. պատեհ առիթ հա-
սած ըլլալով մանրամասն ձեւով
կը պատմէ ու յոյց կուտայ, և
միանգամայն կաւելացնէ թէ,
այս վայրկեան իսկ կօմիթէ կոչ-
ուածներն, Արախ, Բերքակ և
Հաւատարիկ գիւղերու մէջտեղ
գանուած մեծ ձորի մէջն կը
գտնուին, և իրենց կեդ-
րոնն անդ է, քանի որ այդ
ձորը երբք ժամու շաի երկարե-
լով, մէկ ծայրը Սասուն կը հաս-
նի. առանք գիւղերնրը ամէն
զէջութիւններ Մշոյ զաշտի մէջ
ընելով, ցորեկներ անդ կը մէ-
կուտանան և եթէ նեղի գան,
շիտակ ձորէ ձոր գէլպի Աստուճ
կը քաշուին, իրենց հետքն կոր-
սնցնելով կառավարութեանն:

Կառավարական պաշտօնեաներն
զինուորականութիւն և խուժան
հայրուկային խումբի ուր գտնու-
իլն և որքան ըլլալը իմանալուն
պէս, առանց ժամանակ կորսն-
ցնելու, զօրք և խուժան շարժ-
ման մէջ գնելով գէլպի այդ ձո-
րը կերթան. հոն հասնելուն
պէս, երկու ուստեք հրացանա-
ձգութիւնը կը սկսի, և քանի մը
ժամ կը տեւէ:

Անառիկ գիրքերն, հայրուկա-
յին խումբերու ձեռքն ըլլալուն
համար զօրքէ և խուժանէ 600է
տեւելի կորուստ մը կը տրուի,
իսկ խումբերի կողմէ մի միայն
«Ս» խմբապետի 18 տարեկան
տղան կը վարնուի:

Այդ անհաւատար կուոյ մէջ
զօրք և խուժան կատուած, ինչ
ընելիքներն չեն գիտեր, ասի մը
յեղափոխականներէ այս ձեւ խայ-
տատուարար պարտուելու վրէժն
լուծելու համար յետս նահանջե-

լով, շուտով Մուշէն թնթանթ-
նեբու կուոյ վայր փոխադրուելու
հրաման կը տրուի, և երբք ժա-
մէն յետոյ հասնելով 4 թնթա-
նութեանը իրենց տեղերն կը
դետեղուին, ու կը սկսի թնթա-
նութեան ձգուիլ:

Խումբերը թնթանթնեբու
պայթելը տեսնելով, կուոյ վայր
ձգելով կը հեռանան:

ՔԱԶԱԼԵՐՈՒԹԵԱՆ ՊԵՏԵԸ

«Մեզ մօտ էր թատրոնը.
որ մի անգամ գոնէ դուրս չբե-
րաւ իր բեմի վրայ հայաստան-
ցու թշուառ պատկերը եւ կե-
րակրում էր հասարակութիւնը
Ֆրանսիական խոհանոցի ազտե-
ղութիւնով»: ՐԱՅՅԻ

Ո՞վ չի խոստովանի թատրոնի ը-
րած ու ընելիք լաւ կամ յոռի ազ-
դեցութիւնը ժողովրդին վրայ: Կը-
կընել միշտ հարիւրաւոր հեղինակա-
ւոր մտքերու կողմէ ապացուցուած
ծշմարտութիւն մը, որուն հազար
անգամներ ալ անդրադարձած է մեր
ժամուրը. աւելորդ է:

Պօլսահայ թատրոնի մասին իր սր-
տի վիշար վերի առնողով կարտայայ-
տէ անմահ Բաֆֆին Պօլսեցի յեղափ-
գործիչ Միքայէլ Տիւաթիկճեանի (Սալ-
ման) բերնով:

Առանց ծանրանալու սակայն Պոլ-
սահայ թատրոնին վրայ, քանի որ
վերջին 15—20 տարուան թուրքիոյ
հայուն կեանքը թերեւս թատրոնի
ողորմելիութիւնը արդարացնող քիչ
թէ շատ զօրաւոր պատճառաբանու-
թիւններ ապ, աչքի առջեւ ունե-
նանք տասնեակ տարիներէ ի վեր ա-
զատ հողի վրայ, ազատ միջավայրի
մէջ ապրող պուլկարահայը: Գոնէ ան
արդեօք դուրս բերաւ իր բեմին
վրայ Հայաստանցիի թշուառ պատկե-
րը: — Ոչ:

Իրաւ է որ, տեղ տեղ տարիներ ա-
ռաջ, քանի մը երիտասարդներ, ինչ
ինչ աչքի դարնող կարեւոր դերասա-
նական խումբեր երբեմն ներկայա-
ցումներ աւաւծ են, բայց իրենց
չի թը կազմած է հին կեանքը, վա-
հանը, վարդանը, այնինչ նոր վար-
դաններ, նոր վահաններ ծնաւ հայ
ազգը իր վերջին տարիներու փոթոր-

կալից կեանքին մէջ : Ատ մատի վը-
բայ համարուող հին կեանքի ներկա-
յացումներն ալ ասուպի պէս անցան
ու գնացին :

Իրողութիւնը այն է որ, պուլիա-
րահայր 7-8 տարիէ ի վեր ունի կա-
նոնաւոր եւ տեւական դերասանա-
կան խումբ մը . որ մը օրանց արդ-
եօք ան մտածեց աս պակասը մա-
սամբ դարձանել — ոչ : Մինչև հիմա
դեռ Յրահանական ու թրքական խո-
հանօցի աղտեղութիւնները, խէնէշ
տիպերն է որ կը ներկայացուին շատ
անգամ հասարակութեան : Ու աս ա-
մէն զժողովութիւնը կուգայ լեցնել
նաեւ այն ցաւալի պարագան — որ
հայ լեզուն, հայ կեանքը քաջալե-
րելու տեղ — մանաւանդ անանկ մի-
ջափայրի մը հասարակութեան մէջ :
որուն պէտքը ունի — թուրք լեզուն է
որ բեմէն ժողովրդին ականջին կը
հնչէ մինչև հիմա . անոր է որ ըն-
տելացուցած են հասարակութիւնը :

Սխալ չհասկցուինք : Եթէ այսօր
հայ լեզուն, հայ կեանքով ներկա-
յացումները քաջալերելու տրամադ-
րութիւնը գոհացուցիչ կերպով առաջ
գնացած չէ պուլիարահայ հասարա-
կութեան մէջ . պատճառը ուղղակի
դերասաններն են : Իրենք սորվե-
ցուցին, իրենք վարժեցուցին հասար-
ակութիւնը խէնէշ թատերգութիւն-
ներէ ախորժեղու ախտին : Պուլիա-
րիոյ մէջ գոյութիւն ունեցող այսօր-
ուան հայ դերասանական խումբը,
չատ չէ, եթէ իրարու վրայ շարժի
մէկ անգամ — մէկ անգամ կը հա-
կընա՞ք — հայ լեզուն, հայ կեանքէն
ներկայացուցիչ տալու գոհողութիւ-
նը ընէր, եթէ տարուան մէջ 3-400
անգամ հայ կեանքը, հայ լեզուն բե-
մի վրայ պիտի պատկերանար, ու աս
սով ժողովուրդը ընտելացած պիտի
ըլլար, այնպէս որ ժողովուրդը ինքը
պիտի պահանջէր աս թիւը կրկնա-
պատկել :

Աս ճշմարտութիւնը ո եւ է տար-
կութիւն կը վերցնէ :

Բայց, կարճ խօսքով, ամէն պարա-
զայի մէջ «արթնութ փրկիօքիբիքո»
ները կամ «բալանդ»ները չեն որ
պիտի կրթեն ժողովուրդը, ազնուու-
ցընեն անոր ճաշակը, ծանօթացնեն
հայ կեանքը, անոնք առ առաւելն ժա-
մանց մը կրնան ըլլալ, ան ալ շատ
անգամ . ոչ կրթիչ ժամանց մը :

Ներկայ կեանքը, Հայաստանցիին
թշուառութիւնը, անոր սղօքու-
թիւնները, հայրուկի քաջադորձու-
թիւնը, հայ վշախառնին հրէշու-
թիւնը, թուրքին գաղանային բռնա-
կայութիւնն ու բռնաբարութիւնը
պէտք է որ պատկերանան հայ բեմին
վրայ և ճանչցնեն հայը հայուն :

Ու խոստովանինք որ, միշտ թըր-
քական ու ֆրանսական կեանքին
հետ գործ ունեցող, իրենց ձիրքերն
ու զգացումները միայն այդ ներկա-
յացումներով խորոզները, այսօր,
չատ հաւանական է, չը կրնան ներ-
կայացնել հայ կեանքը — համեմատե-
լով իրենց դերասանական արուեստին
հետ ի հարկէ — այնպէս ինչպէս ներ-
կայացուցին մէկէ աւելի անգամներ
խումբ մը երիտասարդներ կամ օրի-
որդներ, օրոնց սիրտը կը բարախէ
այդ բանին համար միայն :

Մխիթարական է տեսնել, որ հայ
բեմին վրայ հայ կեանքին բացակա-
յութիւնը ու կամ կանուխ զգացած
է Յիլիպէի երիտասարդութիւնը և

ճիւղեր կրնէ այդ պակասը քիչ թէ
չատ գոցելու :

Մարդ իր հիացումը, ուրախու-
թիւնը չը կրնար զսպել մանուանդ
երբ կը տեսնէ որ, խումբ մը գա-
ղափարական օրիորդներ ամէն բար-
յական գոհողութիւն յանձն առած,
ստնակոխ ընելով հասարակութեան
տգէտ և բամբասող դասակարգին
խորժանքները, ճակատաբաց առաջ
կը նետուին ձեռք տալու համար ի-
րենց եղբայրներուն խրախուսանքի
առաջին դռնական օրինակը հան-
դիսանալով անոնց, ու ասով ուժ
տալ կը ջանան գործի մը, որ ամէն
բանէ առաջ ԳԱՂԱՓԱՐԻՆ կը պատ-
կանի : Կը թողունք որ, իրենց քայ-
լին բարձրութիւնը և հետզհետէ ա-
մէն նկատում մէկ կողմ թողլով ի-
րենց ձեռք տուող գաղափարական ու-
րիշ օրիորդներու նոր շարքերը ի-
րենց պարձանքն ու գոգասանքը ը-
լայ :

Իսկ ցանկալի է որ այս ոգեւորու-
թիւնը, եւանդը միւս քաղաքներու
երիտասարդութեան մէջ ալ ծայր տայ
և «տեւական ըլլայ» :

Ապահովարար, տասնեակներով ժո-
ղովուրդին թշուառութիւնը նկարա-
դրող ազգու յօդուածներ չի պիտի
կրնան այնքան ազդել մեր հասարա-
կութեան վրայ, որքան պիտի յաջո-
ղի ընել մէկ ներկայացում մը : Թո-
ղունք անոր նիւթական մասը ի նը-
պաստ աս կամ այն բարենպաստակ
գործին :

Յիլիպէի թատերասէր խումբին
աս օգտակար ձեռնարկը քաջալերու-
թեան արժանի է, քանի որ, ան,
հեռու շահագրիտական նպատակներէ,
մի միայն օգտակար ըլլալու համար է
ժողովուրդին :

Եւ օրինակներն ալ ցոյց կուտան
որ հասարակութիւնը սկսած է ալիւս
ունկնդրելու, զգալու, տեսնելու
բռնու փափաք մը ունենալ :

Շատ ալ յոռուտն չըլլանք, թող
ճիւղեր ընէ թատերասէրը հասարա-
կութեան տալու «Դաւիթ ըկկ»եր,
«Սամուէլ»ներ և ասկից ետք բարե-
գործական նպատակներու շարքին
մէջ թող աշխատի ներմուծել յեղա-
փոխութեան ալ ստանդակելու նպատ-
ակը :

Յիլիպէ 29 նոյեմբեր
ՀՐԱՆԳ-ԹԻՐԱՅՐ

ՈՊԻՆ

(Պետրոս Սեբեմեանի յիշատակին)
Հընուց արևնա Մարիցան լուկ
Դողդող, գայարուն հողիէ ալիք,
ձընչող լուսութիւն, հըծծիւն խաւա-
րին

Միայն խոնկարէ կատաղած քամին :

Ու սե կախողանի մուսլ կա-
տարէն
Արագ սրլանայ Պետոյի ողին,
Մուտ ամպերու մէջ հրդեհէ մարած
Փայլակն ու կայծակ սարերուն
Մասեաց :

Բնութիւնը ճըշայ, կըծկի դո-
ղալն
Շանթ մը որոտայ, շանթ մը զայ-
րագին,

Ու նեախ մը պէս զարնէ նա ուժգին
Քար կտրած սիրտը լիրբ բռնաւո-
րին :
ԱՆՈՒՇԱԻԱՆ

5 դեկտ վարնա

ՕՆՆԻԿԻՆ

Չեմ ուզեր ասեղ,
Տուէք հըրացան,
Գընդակահարեմ
Ես թուրքը գաղան :

Չեմ ուզեր ես թեկ,
Տուէք ինձ վառոտ,
Որ շանթահարեմ
Յամ թուրքը աղտոտ :

Չեմ ուզեր պատտառ,
Տուէք ինձ գընդակ,
Թուրքը անպատկառ
Ընեմ շան սատակ :

ԹԱԹՈՒԼԻՆ

Ալ չեմ ուզեր ես զէնք չինել,
Եւ ոչ ալ հինը նորոգել .
Կուզեմ անձամբ զէնքը անել
Ու բիրտ թուրքին դէմ արշաւել :

Պաղ երկաթը շատ շոյցի,
Ան ինձ միայն ըստակ առաւ,
Հիմակ ալ հուր ելկաթ կուզեմ
Որ վատ թուրքէն վրէժ լուծեմ :

ԱՐՄԵՆԻԱ ԼԻՊԵՐԱՆՏԱ

Հայկ. դատի բարեկամ Ձուի-
ցերիտցի և հայ երիտասարդ-
ներ հիմնեցին (Արմէնիա Լիպե-
րանտա) անուն միութիւնը . մի-
ութեան նպատակն է բարոյական
և նիւթական կերպով օգնել հայ
դատին ծանօթացնելով հայ ազ-
գը, իր գրականութիւնը վարք
ու փառքը քաղաքակիրթ աշ-
խարհին : Այս կը կատարէ միու-
թիւնը հայկ. գրականութեան
ընտրեալ կտորներ Գերմաներէնի
թարգմանելով և Հայաստանէն և-
կած լուրերը հոն պատահած
ղէպքերու նկարագրութիւնը տե-
ղական թերթերու մէջ հրատա-
րակել տալով : Միութիւնը կօզ-
նէ հայ. դատին նաև նիւթապէս
իր մուտքի ողբիւրներէն մին է
ժախել գործածուած նամակա-
յրօշմներ և բաց նամակներ,
ուստի ներկայիս կը խնդրենք
ղանական երկիրներու մէջ բնա-
կող գաղափարակից բարեկամնե-
րէ, որ հաճին այս փոքրեկ օգ-
նութիւնը մեզ չի վրանալ :

Ի դիմաց Արմէնիա Լիպերանտա
Կոմիթէի

Բարտուղար Նախագահ
Մարգարեանի Է.Սուրբէր

ՊԵՏՈՒ . ԹԱԹՈՒԼԻ ԵՒ ՕՆՆԻԿԻ
Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն
Թուրքիկ ակնարկներ

—(0)—

Իրում եմ այդ երեք հերոսնե-
րի մասին, որովհետեւ նրանց
հետ զոհ գնացած երկու հերոս-
ներին չեմ ճանաչում : Գիտեմ
միայն որ, Տրապիզոնցի Անտոնը
Թահրի փաշայի ահաբեկչին էր,
մեծ ցաւ էր զգացել որ չէր յա-
ջողել ստակեցնել այդ փաշային,
այդ պատճառաւ էլ աւելի կատա-
ղած, միշտ դժուարին, անպատ-
ճառ թուրք սպաննելու առիթ ու
գործ էր որոնում :

ՊԵՏՈ

1898ի ձմեռը Փիլիպէ գնացի
Դաշնակցութեան գործերով : Պե-
տոն այդ ժամանակ արդէն հայ-
րենիք էր վերադարձել և միւ-
թարում էր մահուան անկողնի
մէջ պառկած իր հայրենասէր
մօրը : Բնական էր որ աւենա-
բուուն հետաքրքրութեամբ ու-
զում էի տեսնել վասպուրականի
հոշակաւոր բուլղարացուն, որի
անունը լսել էի, բայց երբէք ա-
ռիթ չէի ունեցել անձամբ տես-
նելու :

Հետեւեալ առաւօտը, երբ ար-
դէն պատրաստվում էի դուրս
գալ հիւրանոցից, տեսնակս
մտաւ իմ բարեկամներից մէկը մի
բարձրահասակ, հուժկու, բայց
քաղցրանայուած գէմքով, խո-
սրպիկ մազերով պակկած լայն
ճակատով երիտասարդի հետ որը
հինբարեկամի պէս, մպատկով, իր
բազուկը յեննելով ինձ, ասեց .
— Իարի եկար, շատ լաւ ժա-
մանակին հասար, չը դիտես թէ
ինչ խառը վիճակի մէջ ենք . . .

Այս երիտասարդը Պետոն էր,
մինը այն մարդկանցից, որոնք
առաջին վայրկեանից սիրվում և
յարգվում են :

Ու սիրեցի իս Պետոն, որով-
հետեւ նա հերոս էր . պարզ,
Բարկէն Սիւնիի և Սամաթիացի
հերոսներ ի տիպարից, ազատու-
թեան գործին նուիրված ու միշտ
աննկուն :

Սոսի երկու ամիս Յիլիպէ մնա-
ցի . գրեթէ ամեն օր տեսնում
էի Պետոն, իր մահամերձ մօր
անկողնի մօտ տխուր նայուածքով
արևնոտ սրտով, Մարիցայի ա-
փերին նրա հետ զբօսնելով ուր
նա ոգեւորված խօսում էր մեր
յնզպիսիութեան մասին, և
պատմում ինձ բուլղար յեղափո-
խութեան գէպքերից, և ցոյց
տալիս այն տեղերը, ուր կախուած
են բուլղարներ :

Ինքը, չը գիտէր թէ ինքնէլ
այդ արևնոտ գետի փերի մօտ
պէտք էր կախվէր նոր բուլղար
հերոսների հետ :

Ու իմ մտքովս էլ չէր անցնում

որ Պետոն իր վերջը այդ գետի
ափերի մօտ կը դանի, այն էլ
կախաղանի վրա . որովհետեւ նրա
սիրտը Հայաստանի մէջ էր, ուր
պարզ ժողովրդին ճանաչելուց յե-
տոյ, եւս առաւել սիրել էր մեր
գոթախտ հայրենիքը .

Երբ արդէն անձնագէտ էլ բա-
ւական մօտեցանք մի օր Պետոն
ասեց .

— Գիտե՞ս Վարդօ, հոգեկան
դրուժիւնն անտանելի է, չեմ
կարող առանց սիրած գործիս
ապրել, սիրտս թոյլ չի տալիս
որ մի ուրիշ գործի ձեռնարկեմ .
միայն մօրս հիւանդութիւնն է
ինձ բռնում .

Մայրս անբուժելի հիւանդ է
չատ է տանջվում խեղճը, Եթէ
ես էլ մօտը չը լինիմ, աւելի
պէտք է տանջվի .

Ինձ թւաց որ Պետոն իր այս
խօսքերով ուզում էր ինձ հասկը-
ցանել որ ինքը ես ընկրկողնե-
րից չէ, և միայն ծանր պատ-
ճառները են իրեն ստիպում մը-
նալ .

— Զուր ես տանջվում Պետօ
պատասխանեցի ես, դեռ շատ
կարող ես սպասել և խորհուրդ
կը տամ սպասել, որովհետեւ
դու շատ ծառայութիւններ կա-
րող ես անել մեր գործին, երբ
այդ գործը աւելի ընդարձակվի
և աւելի մեծ ուժերի պէտքը ըզ-
գայ այն ժամանակ գնաց, մա-
նուանդ որ ընտանեկան վիճակը
էլ հիմա այդպէս է .

Իրա վրա անցաւ երկու տարի,
Պետոն արդէն Եւրոպայի կարե-
ւոր աշխատակիցներից մին էր .
նա հանգամանքների բերմամբ
գրիչով էր պաշտպանում յեղա-
փոխական գործը շարունակ բուլ-
ղարական յեղափոխական վէպեր
թարգմանելով և մեր հակայեղա-
փոխականների դէմ կռուելով .
նա դրեց և պատուոյ ատենանի դէմ
կրակոտ բարոյականը և պրէստի-
ժը պաշտպանող յօդուածը .

Վերջին անգամ, անցեալ ձմեռ
Պետօն հանդիպեցի Սօֆիայում,
ծառայում էր լուսսւորութեան
նախարարութեան մէջ, սակայն
կրկին դժգոհ էր, ասում էր .

— Յոյս կայ աւելի լաւ
պաշտօն ձեռք բերել, սակայն
չեմ գիմանում, բարոյագէտս գոհ
չեմ ինձանից, ծառայելու չէ .
ոչ էլ ապագայ պատրաստելու .

Հիմա քոյրերս ամուսնացան,
եղբայրս էլ շուտով պնեւորութիւ-
նից կազատվի, իւրեւում եմ հօրս,
որը մօրս մահից յետոյ շատ է
ընկել սակայն չը կարծեմ որ եր-
կար գիմանում այս գրութեան .

Ք Ա Ր Ո Ւ Լ

Կրկին Թիւրքի մէջ հանգի-
պեցի, և նոյն հիւրանոցում, նոյն
բարեկամի հետ Թաթուլը եկաւ
սենեակ .

Միջհասակ, երկաթէ կաշ-
մված քով, լայն թիկունքով, շա-
րունակ մանկական ժպիտը երե-
սին, քնքուշ ձայնով մի երիտա-
սարգ էր Թաթուլը, զինագործ,
ճարպիկ, շատ անգամ Ագրիա-
նապոլսի նահանգը մտած զնա-
զան յանձնարարութիւններով,
ու քաջ .

Չայնր այնքան քնքուշ էր խօ-
սած ժամանակ, որ կարծես թէ
միշտ իր ասածները գաղտնի
պահելու համար էր ասում .

Երբ առաջին անգամ հանգի-
պեցինք, նա առաջարկեց որ ի-
րեն ու է մի ծանր, գոլուորին
գործ յանձնենք կատարելու հա-
մար .

Թէեւ Թաթուլին անձամբ չէի
ճանաչում, բայց նա մի պարո-
նի հետ գեռ ԾԵ թւականին մի
գործ էին յանձն առել կատարե-
լու և չը կատարեցին, ու Դաշ-
նակցութիւնը շատ քիսա կրեց
այդ պատճառով, Միւս պատա-
նին ես ճանաչելով արդէն ան-
նպաստ կարծիք էի կազմել նրա
մասին, և հարկէ մասամբ էլ
Թաթուլի, և այս անգամ չը կա-
րողացայ ինձ զսպել և ծաղրեցի
ասելով .

— Եթէ անցեալ անգամվայ
գործի պէս պէտք է կատարէր,
չատ մեծ օգուտ կը տար հայ յե-
ղափոխական գործին .

Թաթուլը կարմրեց, վիրա-
ւորվեց և պատասխանեց .

Ես մեղաւոր չեմ, գործը ինձի
չէր յանձնված, ես ուրիշի հրա-
մանի տակ պիտի կատարէի, իմ
ընկերս երկրի մարմնէ արտօն-
ված էր այդ գործը կատարելու
իմ պարտքս էր անոր կարգադ-
րութեանը հետեւիլ, Հիմա կու-
զեմ որ ինձի յանձնուի, ես ինձի
համար ընկեր կը գտնամ .

— Եստ լաւ, պատասխանեցի,
դու քու արհեստովդ զբաղվիր,
եթէ քու ուզած յարմար գործ
լինի այն ժամանակ կառաջար-
կենք քեզ, Բայց հիմա այդ տե-
սակ գործ չը կայ .

— Բայց հաւատացի՞ք որ ես մե-
ղաւոր չեմ այն գործին անյաջո-
ղութեան մէջ .

— Այո, հաւատացի .
Իսկպէս հաւատացի—որով-
հետեւ Թաթուլը մեծ մեծ չէր
խօսում, ու երբէք քաջի դիմակ
չէր հագնում .

Այնուհետեւ Թաթուլը շարու-
նակ մօտս էր, միշտ միայն, միշտ
ծրագրերով, որոնց
մեծ մօտը անիրականալի կամ
թէ առանց ս և է օգուտ բերե-
լու կորստաբեր էր .

Թաթուլը յեղափոխական բա-
նաստեղծ էր, սակայն այն տար-
բութեամբ որ ինքը միշտ,
պատրաստ էր իր կեանքը զոհ
տալ բանաստեղծականը իրակա-
նի վերածելու .

Նա գործ էր ուզում անել, իր
ամբողջ սիրտը և ուզելը գործին
էին ներկրված, արբած էր զոր-
ծով, Թաթուլի պէս մարդը եթէ
Պետոյի պէս զարգացած ընկերով
հետ Զէյթունի կամ Սասունի մէջ
լինէին հրաշքներ կը գործէին .

Բայց բախտը ուրիշ կերպ էր
որոշել .

Թաթուլը դեռ երեք տարի ա-
ռաջ մի քանի բուլղարներ հետ
միասն ուզեց անցնել Մակեդո-
նիայ բուլղար կատարութիւնը
ձեռքառելուց նրանց, սակայն
գատարանը արգարացրեց .

ՕՆՆԻԿ ԹՈՐՈՍԵԱՆ

Կարճահասակ, փայլուն սեւ աչ-
քերով նիհար երիտասարդ էր
Օննիկը, արհեստը դերձակու-
թիւն .

1898ի գարնանը երբ վերա-
դարձայ Վառնա մի քտնի օրից
յետոյ Օննիկը եկաւ մօտս ծանօ-
թացաւ, բացատրեց իր անտա-
նելի նիւթական վիճակը, որի
պատճառով ստիպված էր ապրել
մի անգլանի մօտ, որը շարու-
նակ հայհոյալիս է եղել յեղա-
փոխութիւնը և յեղափոխական-
ներին, ու ինքը եթէ երկար մը-
նայ այդ ան մէջ, անպատճառ
մի փորձանք պիտի պատահի .

Պարզեց որ ինքը դեռ յեղա-
փոխական ոչ մի գործի մէջ չէ
եղել, բայց պատրաստ է ամէնա-
վառնգաւոր ձեռնարկութեան մէջ
մտնել .

— Ես պատասխանեցի որ առ-
այժմ այդ տեսակ ոչ մի գործ չը
կայ աչքի առջև .

— Ուրեմն ինձի քանի մը ֆը-
րանք տուէք, ես այս տունէն
ելլամ, գործ գտնուել պէս ինկոյն
կը վճարեմ .

Օննիկի առաջարկութիւնը շատ
վատ ազդեց վրաս, այդ այն օ-
րերն էին, որ իսկական վտանգ-
իւս ու չբաւոր գործիչների հետ
չատ անպէտք արարածներ էլ մեծ
փափաք ունէին յեղափոխական
կաստից օգնութիւն և թոշակ
ստանալ, Ով որ Դրօշակ ու Հըն-
չակն իրաւունք էր համարում յե-
ղափոխական հոշակել և գրամ
ատանալ ապրելու համար .

— Օննիկի աստղարկութեան
ինձ վրա թողած տպաւորութիւնը
չը ծածկեցի և իր ն յայտնեցի .

— Իրաւունք ունիք, ես արդէն
չեմ ըսեր որ գործիչ եղած եմ,
այլ կուզեմ ըլլալ, Գետոյ ես կա-
նոնաւոր արձեւս ունիմ, աջակ-
ցեցէք, եթէ հոս չը գտնում,

Թիւրքի պիտիմ երթաւ, եթէ երբ
և իցէ չը կրցայ կօմիտէի այդ
ստակը վերադարձնել, յուսով եմ
որ երբէք չի պիտի զղջաք ինձի
օգնած ըլլալնուդ համար .

— Եստ լաւ, վաղը եկէք վերջ-
նական պատասխան կը տամ,
պատասխանեցի ես .

Երկրորդ օրը, բաւական ման-
րամասն տեղեկութիւններ հա-
ւաքելուց յետոյ համաձայնեցի
Օննիկի խնդրիւր կատարել և
նրան ճամբու ծախք տալ .

Կարճ ժամանակից յետոյ Օննի-
կը Թիւրքի գնաց .

Եւ երբ վերջին անգամ անց-
եալ տարի Թիւրքի գնացի, Օն-
նիկը ա դէն իր արհեստով բա-
ւական դրամ էր շահում, իր շա-
հածի զգալի մասը իր չքաւոր
ընկերների հետ բաժանում էր,
բացի այդ Օննիկը զինն վարձնե-
րի ընկերութեան մէջ հրացա-
նաձգութեան առաջին մրցանակ
ստացողն էր .

Իսկ յուրիս Եի Ատրիանապոլսի
կուր մէջ ամէնաքաջ կուռչներից
մէկը .

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Տրապիզոնի մէջ Կարնոյ կարօտե-
լոց ի նպաստ ներկայացում ժողովու-
րը վալին դրամ և հանդերձեղն հա-
ւաքեր զրկել է Երզնկայի մէջ հազար
լիրայի չափ հանգանակուել .

Լօնտօնի մէջ հանգանակուած 3500
լիրայն մաս մը կարնոյ վալին յանձ-
նէր է հայոց տաճարը Զաֆէն վալը-
դապետի հայ կարօտելոց համար .

Երկրաշարժի պատճառած ընդհա-
նուր քիսաւ մէկ միլիոն լիրայի կը
հասնի .

— Գէորդ Եպիսկոպոս Իւթիճեան
Եւրոպայի մէջ հանգանակութեան ըս-
կիւր է Կարնոյ կարօտելոց համար .
Մարտիկոյ մէջ արդէն հազար Փրանք
հանգանակուած է .

— Պոսայ հիւանդանոցին ի նպաստ
տրուելիք նուագահանդէսին պատրաս-
տութիւնը այդէն կը տեսնուին .
— Երուտագէտի Յարութիւն պատ-
րիարքը դուժար մը զրկել է Կարնայ
կարօտելոց համար .

— Իւսկիւտարի մէջ 19 տարեկան
աւատրիացի հայախօս օրիորդ մը պատ-
րիարքարանէ խնդրած է որ զինք հայ
եկեղեցւոյ գրիւր ընդունին, որով-
հետեւ հայ երիտասարդի մը հետ պի-
տի ամուսնանայ .

Իզմիրի Ամերիկեան վարժարանի
սնօրէն անձամբ հանգանակութեան
կրած է ի նպաստ Կարնոյ կարօտելոց .
Իզմիրի միթիարեաններն ալ հանգա-
նակութեան ձեռնարկել են, Հայոց
տաճարը դեռ կը քնանայ .

— Կովկասի մէջ կը պատրաստուին
տօնել լազաշխատ Գ. Բարխուդար-
եանի գործունէութեան քառասունամայ
տարեգարծը, գերմաներէնէ շատ
թարգմանութիւններ բրած է, շարու-
նակ ուսուցիչ եղած է հայ դպրոցնե-
րու մէջ և Գամառ-Քաթիպայի ընկեր-
ներէն է .

— Պարսկաստանի Գէորդ Թումանեան
8060 ֆրանք նուիրել է Եւրոպայի
հիւանդանոցին .

Վ Ի Թ Պ Ա Կ

Հուգուգի թարգմանութեան առաջին սիւնակի Գրգ. տղի անմիջեւ թարգմանութեան անմիջեւ և երկրորդ սիւնակի 22րդ. տղի գիրքն թարգմանութեան գրին :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Շումիա . — Հ. Գ. կարճ գրքեր կը տպագրենք :

Ֆիլիպէ Վ. Մ. Զեր յոյուածը շարժական երկար է . անկարող ենք տպագրել . իսկ ես դարձընելը խմբագրութեան կանոններին հակառակ է . կարդացէք թերթի ճակատի յայտարարութիւնը :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Քանի մը օր է որ նախարարութիւնը հրատարած է փոխառութիւնը և մոնօթօրը ազգային ժողովն սերտութեամբ պատճառով :

Ինչ որ անդիտութիւնները չը կան նոր դաշինք կազմութեան համար :

— Չանաղան քաղաքներու մէջ միջինները տեղի ունեցած են փոխառութիւնը բացառող մտքով :

Սօֆիայի միջինները բաւական բազմամարդ եղած է :

— Նախարարութիւնը հրատարականք ետ առեր է . բայց փոխառութեան մասին գեա լուր չը կայ :

Ա Ր Տ Ա Ք Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Անդրկական թերթերը կը հաղորդեն որ Ռուսիոյ և Չինաստանի միջև նոր համաձայնութիւն մը կայացեր է Մանչուրիոյ մասին :

— Չինական կայսրը շուտ Բէքին պիտի հասնի :

Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն

Տամատ Մահմետ փաշա յոյն լիազարգացման խնդրած է իր քօրքու միալուս ժամանակը երկարացնել որովհետեւ ծանրապէս հիւանդ է :

Կը կարծուի որ փաշային հիւանդութիւնը անբուժելի է :

Ի Տ Ա Լ Ի Ա

Դեկտեմբեր երկուսին արտաքին գործոց նախարարը Անգլիոյ . Ռուսիոյ և Ֆրանսայի դեսպանները կրէտէր մասին խորհրդակցութիւն մը ունեցեր են . մասնաւորապէս կէորկի իշխանի լիազորութեանը վերաբերմամբ :

Թ Ա Տ Ր Ո Ն Ս Ա Ն Թ Ր Ա Լ

— (Ո) —

Վ Է Ս Է Լ Օ

Վաղը կիւրակէ ցորեկէ վերջ ժամ 3ին սեգային փառաւորներ . կայացուցն հայերէն լեզուա :

Ս Ե Ւ Հ Ո Ղ Ե Ր

Երգարտուն թատերախաղ 3 արար հեղինակութիւնը բարեխիշտակ Պ. Գուրեանի

ժիծադաշարմ գլուխ մը

Նոր եկող իտալական երգչացիկ խումբին կ'զմանէ երգեր և պարեր :

Օթէլլօյի փորձը կը շարունակուի

ԽՄՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐԻՍԻՄ

Կը տպագրուին ամէն լեզու ալցեառման . հասցէառման . նամակագրութեան . հարսանեկան հրատարակիչ . մահապա :

Գինեքը յոյժ դիւրամտացիկ :

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին :

ԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՆԻՒՄ

Յ Ա Տ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Հայկերեբրգում հիւնել է մի գրադարան . որ նպատակ է գրել ծանօթացրնել արտասահմանի հայ ուսանողութեան և ընդհանրապէս հետաքրքրող անձանց հայոց ներկայ կեանքին վերաբերեալ հայերէն և օտար լեզուով լոյս տեսած գրքերի հետ : Գրադարանը ունի յիշեալ նպատակով հրատարակած գրքերի մի համեմատ թիւ որի համար յայտնում ենք նուիրատու անձանց մեր խորին շնորհակալութիւնը և խնդրում ենք այն անձանց հաստատութիւններին . որոնք կամենում են գրքերով և իւրաքանչիւր թիւներով օգնել գրադարանին . բարեհաճին ուղարկել հետեւեալ հասցէով

A. Iohannessian Heidelberg Kaiser 31 № 5

Ե Ի Ր Ո Պ Ա Յ Ի Հ Ա Յ Ո Ւ Մ . Մ Ի Ո Ւ Թ Ի Ւ Ն

Եւրոպայի Հայ . Ուս . Միութեան նամակ ուղարկելու և առհասարակ ամէն տեսակ զիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով Իւնիոն Տէ Զ'էդիւսիս Արև . Լ'էօրոք րիւ սը Լ'էօր սը Ծիւի 2

Սուխ Ժընէվ Կարգողիթ Յանձնաժողով

Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն

Լաթ ներկելու և քիմիապէս մաքրելու :

Վ. Ս Թ Ո Յ Ի Լ Օ Յ

ԵՒ

ԻՎ. Մ. ԲՕԻՕՅ

ՐՈՒՍԵՈՒՔ

Սոյն գործարանի մասնաճիւղը որուն կառավարին է Բէթր ԿԼՈՒՇԻՔՕՅ «Իզվէստնիկ» խմբագիրը . քաղաքային պարտէզին դիմացը :

Կը ներկէ կանանց և մանկան առ զքեաններ . մետաքսէ . բրդէ և բամբակէ գործուածքներ . նոյնպէս վաճառականական ապրանքներ ու մանուածքներ : Ներկը չի թափիր . միայն ներկելու տալիք նիւթերը մաշած չ' պիտի ըլլան :

Գինեքը չափաւոր են :

Ա Ձ Դ

Վառնայի ազգային մանկապարտէզին համար կարող մանկապարտէզուհի մը կուզուի . գոհացուցիչ սմաթուշակ . զիմե անձամբ կամ նամակաւ տեղային վարժարանաց հոգաբարձութեան :

Մ Ե Ր Բ Ս Փ Ա Ն Ո Ր Դ Ն Ե Ր Ո Ւ Ն

Անշուշտ մեր չը վճարող բաժանորդները . եթէ փոքր ինչ պարտաճանաչութեան զգացմունք ունին . կարգացին մեր նախորդ ազգերը որոնցմով կը յայտարարուէր թէ չը վճարող բաժանորդներու տնտեսները պիտի յայտարարուի Դարձումի մէջ : Գտնուեցան բաժանորդներ որոնք շտապեցին իրենց պարտքը վճարել . իսկ մէկ կարեւոր մասնաւոր գեա արձագանք չը տուաւ : Հիմա այդպիսիներուն կը յայտարարենք որ իրենց ժամանակը կը արուի մինչև զեկտ . 15ը : Մինչև այդ օրը պիտի սպասենք . ու այնուհետեւ իսկ պիտի հրատարակենք :

Ա Ձ Դ

Բաղէչի կուսակալութեան պատկանեալ Յուրդաի գիւղէն Պէկո Ասատուրեանի . հաստատակաղմ չէկ պէտով ու յոնքերով . 6 ամիսէն ի վեր ուր լինելն անյայտ է զայն եթէ ճանաչողներ կան յանուն մարգասիրութեան թող իր այրի տիկին մայրը միտի թարեւ հաճին . անոր ուր գտնուիլը խմբագրութեանս հաղորդելով :

Յ Ա Տ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ֆիլիպէի «Հայկական երգեցիկ խումբը» սա շրջանին մէջ վերականգնած ըլլալով արդէն իր պարտաւորութիւնները . ճեռնարկած է նաեւ պարբերաբար հրատարակելու եւրոպական ճայնագրութեամբ հայկական հին և նոր քառածայն երգեր . մաքուր թղթի վրայ . յստակ վիճակով :

Այդ առթիւ երգեցիկ խումբը վարչութիւնը ներկայիս կը յայտնէ Պուլկարիոյ և արտասահմանի երաժշտասէր հայ երիտասարդութեան . որ եթէ առ երգերէն փափագողներ կան . հաճին դիմել վարը նշանակուած հասցէին՝ վճարելով «մէկ թուղթին» համար 20 սանթիմ . փոստի ծախսը մեր վրայ . կան երգեր որոնք թէ կէ աւելի թուղթերէ կը բողկանան :

Էրտասահմանի համար 35 սնթ . Ֆիլիպէ վարչ . «Նայի» երգչացիկ խումբին :

Հասցէ՝ Agop Sivadjian Philippopie

Գ Ո Ւ Թ Ա Ն

Հանդես անուայ . հողագործական . գիտական և արտեսագիտական Հիմնադիր տնօրէն Գարեգին Գ. Մեծաւորեան Հրատարակուած է Դրոյ թիւը . շանկան քովանդակութեամբ : Տարեկան բաժնեգինն 12 Ֆր . դիմել հիմնադրին . 23 rue de la Collegiale

Կ Ա Ղ Ա Ն Դ Ձ Ե Ք

Նոր լոյս տեսաւ այս գրկոյքը արձակ և ոտանաւոր :

Հեղինակը զայն գրչի պրօսանք անուանած է . և իրաւ ալ գրչի պրօսանք է :

Գինն է 40 սնթ . կը ծախուի Վարնայի մէջ Զարպհանէլեան գրատունը :

Ա Ձ Դ

Խորհուրդս կուգայ ներկայիս յայտարարել որ տեղէ մը ուրիշ տեղ փոխադրուելու համար քաղաքէս անձնող ազգայինը իրենց ճանապարհաժախը ամբողջովին չի հայթայթած խորհրդոյն օգնութեան վրայ յոյս դնելով ճամբայ չեղնեն . որովհետեւ այդպիսիներուն թաղական խորհուրդը նիւթական օգնութիւն մը ընելու անկարող է : Հետեւաբար խորհուրդս նիւթական օգնութիւն մը յուսալով քաղաքս եկողները թափառական և անօգնական պիտի մնան ի հարկէ ոտիպուած :

(ԿՆԻ)

Ա Ձ Դ

Կը ծախուի 1896ին վեար . 2ին իշխան Պօրիսի միտութեան առթիւ տպուած գործածուած նամակագրօշներ 1—5—15—25 սանդիմ :

Դիմել՝ ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱԾՅԱՆ

Վառնա

Отговорникъ: Мурадъ-Ераносянъ Печ. Взаимность — Варна